ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կողմից հայտարարված հրապարակային աճուրդ-վաճառքը տեղի կունենա Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 62 հասցեում գտնվող Արտաշատի համայնքապետարանում՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ին ժամը 11-ին: Աճուրդի կդրվի Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող հետևյալ անշարժ գույքերը՝

- Արտաշատ համայնքի Դալար գյուղի, Պ. Սևակի փողոց 13/3 հասցեում գտնվող 03-032-0026-0083 կադաստրային ծածկագրով 0,02466հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել՝ 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
- Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի, Արտաշեսյան փողոց 7 հասցեում գտնվող 03-001-0604-0026 կադաստրային ծածկագրով 0,00532հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել՝ 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի, Արազու փողոց 43/3 հողամաս հասցեում գտնվող 03-001-0173-0126 կադաստրային ծածկագրով 0,0032հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել՝ 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- Արտաշատ համայնքի Բուրաստան գյուղի, Ա. Խաչատրյան փողոց 26 հողամաս հասցեում գտնվող 03-027-0201-0013 կադաստրային ծածկագրով 0,08972հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել՝ 1 150 000 /մեկ միլիոն հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
- Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի, Սահմանապահների փողոց 9/1 հասցեում գտնվող 03-001-0665-0004 կադաստրային ծածկագրով 0,1հա

մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս: Մեկնարկային գինը սահմանել՝ 3 200 000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

- Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի, Կ. Մարքսի փողոց 7/5 հասցեում գտնվող, 03-001-0126-0084 կադաստրային ծածկագրով 0,013հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել՝ 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ:

Աճուրդի նախավճարի չափ է սահմանվում մեկնարկային գնի 50%-ի չափով: Վճարման հաշվարկային հաշվեհամարն է՝ 900415151068: Աճուրդի դրված հողամասի քայլի չափը հաշվարկված է մեկնարկային գնի 5 % չափով: Աճուրդի հայտի, մասնակցության վճարի անդորագրի, պահանջվող մյուս փաստաթղթերի ընդունումը կդադարեցվի աճուրդի նշանակման օրից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ՝ մինչև 2023 թվականի նոյեմբերի 15-ը:

Տվյալ հողամասերը ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ընդգրկված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, հողամասերի օգտագործումը չի առաջացնում սերվիտուտ:

Առաջացած հարցերի և տեղեկությունների համար դիմել Արտաշատի համայնքապետարան աճուրդային հանձնաժողովին /կազմակերպչին/: Հեռախոս՝ 091191151

Աճուրդին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝ անձը հաստատող փաստաթուղթը և նախավճարի անդորրագիրը:

Աճուրդավար՝ Համայնքի գլխավոր ճարտարապետ Վարդան Այվազյան

Արձանագրող՝ Համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Արամայիս Բաղալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ.ՄԿՐՏՉՅԱՆ**